1670· ՌՃԺԹ· Պր· Ստեփան Սարգսեան Ռոշքայ՝ հայր իմ՝ մեռաւ, մարտի 28· ես ընծայեցայ օգոստոսի 12 ըստ հնոյն, Լատինաց 22։

1671· ՌՃԻ· Յոհաննէս Քարմատանենց Լէսպոլսեցի եպիսկոպոս սուքրական (օգնական կամ տեղակալ), մինչ Նիկողայոս արքեպիսկոպոսն էր ի Հռովմ, կառավարէր զեկեղեցիս մեր· զբազում բարեկարգութիւնս արարեալ՝ տրամադրեաց զՊատարագատետրն և զՄաշտոցն Հայոց՝ քաջ ուղղափառ, եղեւ ի Հռովմ· և զկնի աշխատանաց հանգեաւ ի Քրիստոս, յամի Տեառն 1678։

1675· ՌՃԻԴ· Նիկողայոս արքեպիսկոպոսն թոյլատուութեամբ Ս· Ժողովոյն, ընարէ և ձեռնադրէ յաջորդ իւր զՏէր Վարդան Յունանեան, անուամբ եպիսկոպոս Եպիփանիոյ· և առեալ զիշխանութիւն ի Սրբազան փաթէն, զպարգեւս զանազանս և զմակագրութիւն ընտանի և առընթերակաց Բրէլատի և Գավալերի Ս· Միքայելի, դառնայ ի Լէսպոլիս։ Ունէ բազում ուղղութիւնս, զայցարարութիւնս եկեղեցեաց, զեղբայրակցութիւն Ս· Գրիգորի Լուսաւորչին և զԱստուածածնին սահմանէ և հաստատէ ի Լէսպոլիս։

Վարդանս այս էր որդի Յունանու քահանայի, ուստի Յունանեան կոչեցաւ, ի ձաղու գեղջէն մերձ Թոխաթու· էր ճարտար գրագիր, ուշիմ և հմուտ բառիցն Հայոց։ Երթեալ յԷջմիածին, և անտի ընդ նուիրակի գայ ի Լեհաստան· ուր զբարեկարգութիւն և զուղղափառութիւն Հայոց տեսեալ՝ մտանէ ի Դպրատունն Հայոց· ուստի զկնի ուսանելոյն ինչ լատիներէն՝ գնայ ի Հռովմ, և ի դպրատանն Ուրբանեան ուսեալ կատարելապէս զլատին լեզու, թարգմանէ (զԱռաջնորդ?) յերկինս, յամի Տեառն 1671· տպի գեղեցիկ ոճով, բայց խրթին և նոր բառիւք։ Զկնի արքեպիսկոպոսին Նիկողայոսի՝ ոչ շատ յամեցեալ և ինքն ի Հռովմ, դառնայ ի Լէսպոլիս· բայց զի Նիկողայոս առոյգ էր և առողջ, առեալ զհրաման ի Ս· Ժողովոյն՝ երթայ ի Հայաստան քարոզելոյ աղագաւ· ուր ընդ ամս իբր տասն տեւէ։

1681· ՌՃԼ· Նիկողայոս Թորոսովիչն արքեպիսկոպոսն Լէսպոլսի գոլով ամաց 85, յայսմ ամի մարտի 21, յետ անպատմելի աշխատանաց իւրոց՝ արդեամբք լի հանգեաւ ի Քրիստոս, ի Լէսպոլիս։ Սա էր որդի Պարոն Յակոբայ Թորոսովիչ մեծատան Լէսպոլսեցւոյ· այր փառահեղ, քաղաքավար, խոհեմ, ճարտար յառնելիսն, և ամենայն գովեստից արժանի· զի երկարաձիգ ամաց տաժանմամբն՝ երկիցս ի Հռովմ, երկիցս յարեւելս երթալով, զազգ մեր Հայոց ի Լեհաստանն՝ ի հնազանդութիւն սուրբ մօր եկեղեցւոյն Հռովմայ դարձոյց· յորմէ և ի Մահառս և յայլ տեղիս ուղղափառութիւնն սփռեցաւ· զսէր և զպատիւ ազգիս մերոյ՝ առ ամենայն ազգինս բարգաւաճեաց· զանուն անմահ յիշատակի ինքեան թողեալ։

1875· ՌՃԼԴ· Ստեփաննոս Լէսպոլսեցի վարդապետն Լեհացի, յազատ